



Եվրոպական պայմանագրերի շարք – Հ- 73

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստրասբուրգ, 15 մայիսի, 1972թ.

Սույն Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունները,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն է իր անդամ պետությունների միջև միասնության ավելի բարձր մակարդակի հասնելը,

Ցանկանալով լրացնել այն աշխատանքը, որն արդեն իսկ իրականացվել է քրեական իրավունքի բնագավառում՝ ավելի արդարացի և արդյունավետ պատժամիջոցներ նշանակելուն հասնելու համար,

Օգտակար համարելով այս նպատակով փոխադարձ վստահության ոգով միջազգային մակարդակում քրեական վարույթների կազմակերպման ապահովումը, մասնավորապես, իրավասությունների բախման հետևանքով առաջացող թերություններից խուսափելու միջոցով,

Համաձայնեցին հետևյալի մասին.

ԲԱԺԻՆ I - Սահմանումներ

Հոդված 1

Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝

ա. «հանցագործություն»՝ ընդգրկում է քրեական օրենքով և սույն Կոնվենցիայի III-րդ Հավելվածում թվարկված իրավական դրույթներով նախատեսված արարքներ՝ պայմանով, որ եթե հանցագործության քննությունն իրականացնելու համար իրավասու է վարչական մարմինը, ապա շահագրգիռ անձը պետք է ունենա գործի դատական քննության հնարավորություն,

բ. «պատժամիջոց» նշանակում է՝ հանցագործության կամ III-րդ Հավելվածում թվարկված իրավական դրույթների խախտումից բխող կամ նշանակված պատիժ կամ ներգործության այլ միջոց:

ԲԱԺԻՆ II - Իրավասություն

Հոդված 2

1. Սույն Կոնվենցիայի կիրառման նպատակներից ելնելով յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն պետք է իրավասություն ունենա, իր ներպետական քրեական օրենսդրության համաձայն, քրեական հետապնդում իրականացնելու այն բոլոր հանցագործություններով, որոնց նկատմամբ կիրառելի է մեկ այլ Պայմանավորվող պետության օրենսդրությունը:

2. Պայմանավորվող պետությանը բացառապես սույն հոդվածի 1-ին կետով վերապահված իրավասությունը կարող է իրականացվել միայն մեկ այլ Պայմանավորվող պետության կողմից ներկայացված՝ վարույթ իրականացնելու մասին խնդրանքի հիման վրա:

Հոդված 3

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն, իր օրենսդրության համաձայն ունենալով որևէ հանցագործության առնչությամբ քրեական հետապնդում իրականացնելու իրավասություն, սույն Կոնվենցիայի կիրառման նպատակներից ելնելով, կարող է հրաժարվել որևէ կասկածյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց կամ դադարեցնել այն, եթե վերջինս արդեն հետապնդվում կամ հետապնդվելու է մեկ այլ Պայմանավորվող պետության կողմից նույն հանցագործության համար: Հաշվի առնելով 21-րդ հոդվածի 2-րդ կետը՝ քրեական վարույթ հարուցելուց հրաժարվելու կամ այն դադարեցնելու մասին որոշումը պայմանական բնույթ է կրում՝ մինչև մեկ այլ Պայմանավորվող պետությունում վերջնական որոշում կայացվելը:

Հոդված 4

Հայցվող Պետությունը դադարեցնում է բացառապես 2-րդ հոդվածի հիմքով իրականացվող վարույթը, եթե տեղեկանում է, որ պատժելու իրավունքը վերացված է հայցող Պետության օրենսդրության համաձայն՝ բացառության վաղեմության ժամկետը լրանալու հիմքի, որի նկատմամբ մասնավորապես կիրառվում են 10-րդ հոդվածի գ. կետը, 11-րդ հոդվածի գ. և է. կետերը, 22-րդ, 23-րդ և 26-րդ հոդվածները:

Հոդված 5

Սույն Կոնվենցիայի III-րդ Բաժնի դրույթները չեն սահմանափակում հայցվող Պետության՝ վերջինիս ներպետական օրենսդրությամբ նախատեսված քրեական հետապնդում իրականացնելու իրավասությունը:

ԲԱԺԻՆ III - Վարույթների փոխանցումը

Գլուխ 1. Վարույթ իրականացնելու մասին խնդրանքը

Հոդված 6

1. Եթե անձը կասկածվում է Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, ապա տվյալ Պետությունը կարող է վարույթ իրականացնելու համար դիմել մեկ այլ Պայմանավորվող պետությանը սույն Կոնվենցիայով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Եթե, սույն Կոնվենցիայի համաձայն, Պայմանավորվող պետությունը կարող է

վարույթ իրականացնելու խնդրանքով դիմել մեկ այլ Պայմանավորվող պետության, ապա առաջին Պետության իրավասու մարմինները պետք է քննարկեն այդ հնարավորությունը:

Հոդված 7

1. Հայցվող Պետությունում վարույթ կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ խնդրո առարկա հանցագործությունն իր տարածքում կատարվելու դեպքում կղիտվի որպես այդպիսին, և երբ այդ դեպքում հանցագործություն կատարած անձը ենթակա կլինի պատժի նաև իր սեփական օրենսդրության համաձայն:

2. Եթե հանցագործությունը կատարվել է հայցող Պետության տարածքում պետական կարգավիճակ ունեցող անձի կողմից կամ այդպիսի կարգավիճակ ունեցող անձի, հաստատության կամ որևէ այլ սուբյեկտի դեմ, ապա հայցվող Պետությունում դա պետք է համարվի այդ Պետությունում պետական կարգավիճակ ունեցող անձի կողմից կամ այդպիսի կարգավիճակ ունեցող անձի, հաստատության կամ այլ համապատասխան սուբյեկտի դեմ կատարված հանցագործություն:

Հոդված 8

1. Պայմանավորվող պետությունը կարող է դիմել մեկ այլ Պայմանավորվող պետությանը՝ ստորև նշված մեկ կամ մի քանի դեպքերում վարույթ իրականացնելու խնդրանքով.

ա. եթե կասկածվող անձը հայցվող Պետության մշտական բնակիչ է,

բ. եթե կասկածվող անձը հայցվող Պետության քաղաքացի է, կամ ծագումով հայցվող Պետությունից է,

գ. եթե կասկածվող անձը հայցվող Պետությունում կրում է կամ կրելու է պատիժ ազատազրկման ձևով,

դ. եթե հայցվող Պետությունում տվյալ կասկածվող անձի նկատմամբ վարույթ է իրականացվում նույն կամ այլ հանցագործությունների առնչությամբ,

ե. եթե գտնում է, որ վարույթի փոխանցումը պայմանավորված է ճշմարտությունը բացահայտելու շահերով և, մասնավորապես, որ կարևորագույն ապացույցները գտնվում են հայցվող Պետությունում,

զ. եթե գտնում է, որ դատավճիռ կայացվելու դեպքում, հայցվող Պետությունում դրա ի կատար ածումը կմեծացնի դատապարտյալի սոցիալական վերականգնման

հնարավորությունները,

է. եթե գտնում է, որ չի կարող ապահովվել կասկածվող անձի ներկայությունը հայցող Պետությունում իրականացվող դատաքննությանը, և որ կարող է ապահովվել նրա ներկայությունը հայցվող Պետությունում իրականացվելիք դատաքննությանը,

ը. եթե գտնում է, որ դատավճիռ կայացնելու դեպքում այն չի կատար ածել նույնիսկ հանձնման ընթացակարգին դիմելու դեպքում, և եթե գտնում է, որ հայցվող Պետությունը կարող է դա անել:

2. Պայմանավորվող պետությունում կասկածվող անձի վերջնական դատապարտման դեպքում, սվյալ Պետությունը կարող է դիմել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված մեկ կամ մի քանի դեպքերում վարույթը փոխանցելու խնդրանքով, միայն եթե ինքը չի կարող ի կատար ածել դատավճիռը, նույնիսկ հանձնման հանձնման ընթացակարգին դիմելու դեպքում, և եթե մյուս Պայմանավորվող պետությունը սկզբունքորեն մերժում է օտարերկրյա պետությունների դատավճիռների կատարումը կամ հրաժարվում է սվյալ դատավճիռն ի կատար ածելուց:

Հոդված 9

1. Հայցվող Պետության իրավասու մարմինները պետք է քննության առնեն նախորդ հոդվածների համաձայն ներկայացված՝ վարույթը փոխանցելու մասին խնդրանքը: Նրանք, իրենց ներպետական օրենսդրության համապատասխան, որոշում են, թե ինչ ընթացք պետք է տալ խնդրանքին:

2. Եթե հայցվող Պետության օրենսդրությամբ նախատեսվում է արարք կատարողի նկատմամբ պատժի նշանակումը վարչական մարմնի կողմից, ապա այդ Պետությունը պարտավոր է հնարավորինս շուտ այդ մասին տեղյակ պահել հայցող Պետությանը, եթե հայցվող Պետությունը սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված հայտարարություն չի արել:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է ստորագրման պահին կամ վավերացման, միանալու կամ ընդունելու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս կամ ավելի ուշ՝ ցանկացած պահի, հայտարարությամբ դիմել Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին՝ նշելով այն պայմանները, որոնց առկայությամբ իր ներպետական օրենսդրության համաձայն թույլատրվում է որոշ հանցագործությունների համար պատժի նշանակումը վարչական մարմինների կողմից: Այդ հայտարարությունը փոխարինում է սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսվող տեղեկացմանը:

Հոդված 10

Հայցվող Պետությունը խնդրանքին ընթացք չի տալիս, եթե՝

ա. դիմումը չի համապատասխանում 6-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին,

բ. վարույթի իրականացումը հակասում է 35-րդ հոդվածի դրույթներին,

գ. եթե դիմումը ներկայացնելու պահին հայցող Պետությունում քրեական հետապնդում իրականացնելու վաղեմության ժամկետն արդեն լրացել է այդ Պետության օրենսդրության համաձայն:

Հոդված 11

Բացառությամբ 10-րդ հոդվածով նախատեսված դրույթների՝ հայցվող Պետությունը չի կարող մերժել խնդրանքի ընդունումը մասնակի կամ ամբողջությամբ՝ բացի ստորև նշված մեկ կամ մի քանի դեպքերի.

ա. եթե գտնում է, որ հիմնավորված չեն 8-րդ հոդվածի համաձայն խնդրանքը ներկայացնելու հիմքերը,

բ. եթե կասկածվող անձը հայցվող Պետության մշտական բնակիչ չէ,

գ. եթե կասկածվող անձը հայցվող Պետության քաղաքացի չէ և հանցագործության կատարման պահին վերջինիս մշտական բնակիչ չի հանդիսացել,

դ. եթե գտնում է, որ հանցագործությունը, որի կապակցությամբ վարույթ իրականացնելու խնդրանք է ներկայացվել, կրում է քաղաքական կամ գույտ զինվորական կամ ֆինանսական բնույթ,

ե. եթե գտնում է, որ հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ վարույթ իրականացնելու խնդրանքը բխում է ռասայական, կրոնական, ազգային պատկանելության կամ քաղաքական տեսակետների նկատառումներից,

զ. եթե իր օրենքն արդեն իսկ կիրառելի է տվյալ հանցագործության նկատմամբ, և եթե խնդրանքն ստանալու պահին վարույթի իրականացումը այդ օրենքի համաձայն բացառված էր վաղեմության ժամկետը լրանալու պատճառով; այս դեպքում 26-րդ հոդվածի 2-րդ կետը չի կիրառվում,

է. եթե իր իրավասությունը բացառապես հիմնված է 2-րդ հոդվածի վրա, և եթե խնդրանքն ստանալու պահին վարույթ իրականացնելն իր օրենքի համաձայն բացառված կլինի վաղեմության ժամկետը լրանալու պատճառով, հաշվի առնելով

23-րդ հոդվածի դրույթների համաձայն վաղեմության ժամկետը վեց ամսով երկարաձգելու հնարավորությունը,

ը. եթե հանցագործությունը կատարվել է հայցող Պետության տարածքից դուրս,

թ. եթե վարույթ իրականացնելը կհակասի հայցվող Պետության ստանձնած միջազգային պարտավորություններին,

ժ. եթե վարույթ իրականացնելը կհակասի հայցվող Պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին,

ժա. եթե հայցող Պետությունը խախտել է սույն Կոնվենցիայով նախատեսված ընթացակարգային որևէ նորմ:

Հոդված 12

1. Հայցվող Պետությունը պետք է չեղյալ հայտարարի խնդրանքն ընդունելու մասին իր որոշումը, եթե ընդունելուց հետո ի հայտ է գալիս սույն Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված՝ խնդրանքին ընթացք չտալու հիմքերից որևէ մեկը:

2. Հայցվող Պետությունը կարող է չեղյալ հայտարարել խնդրանքն ընդունելու մասին իր որոշումը, եթե.

ա. ի հայտ է գալիս, որ կասկածվող անձի ներկայությունը հայցվող Պետությունում իրականացվող դատաքննությանը չի կարող ապահովվել, կամ որ կասկածվող անձի նկատմամբ կայացվելիք դատավճիռը չի կարող կատարվել տվյալ Պետությունում,

բ. նախքան գործը դատարան ներկայացնելը ի հայտ է եկել 11-րդ հոդվածում նշված հիմքերից որևէ մեկը,

գ. այլ դեպքերում՝ հայցող Պետության համաձայնությամբ:

Գլուխ 2. Փոխանցման ընթացակարգը

Հոդված 13

1. Սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր խնդրանքները պետք է ներկայացվեն գրավոր: Դրանք, ինչպես նաև Կոնվենցիայի կիրառման համար անհրաժեշտ բոլոր այլ հաղորդագրությունները պետք է ուղարկվեն հայցող Պետության արդարադատության նախարարության կողմից հայցվող Պետության արդարադատության նախարարությանը կամ, հատուկ փոխադարձ

համաձայնությամբ, անմիջապես հայցող Պետության իրավասու մարմիններից հայցվող Պետության իրավասու մարմիններին; դրանք հետ են ուղարկվում նույն խողովակով:

2. Անհետաձգելի դեպքերում խնդրանքները և հաղորդագրությունները կարող են ուղարկվել Միջազգային քրեական ոստիկանություն կազմակերպության (Բնտերպոլի) միջոցով:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ ծանուցել, որ իրեն վերաբերելի մասով մտադիր է ընդունել փոխանցման այլ կանոններ, քան նախատեսված են սույն հոդվածի 1-ին կետով:

Հոդված 14

Եթե Պայմանավորվող պետությունը գտնում է, որ մեկ այլ Պայմանավորվող պետության կողմից ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ իրեն սույն Կոնվենցիան կիրառելու հնարավորություն տալու համար, ապա այն պետք է պահանջի անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն: Նման տեղեկատվություն ստանալու համար Պետությունը կարող է ժամկետ նշանակել:

Հոդված 15

1. Վարույթ իրականացնելու մասին խնդրանքին կից պետք է ներկայացվեն քրեական գործի և անհրաժեշտ բոլոր մյուս փաստաթղթերի բնօրինակները կամ վավերացված պատճենները: Այնուամենայնիվ, եթե կասկածվող անձը 5-րդ գլխի դրույթների համաձայն պահվում է նախնական կալանքի տակ, և եթե հայցող Պետությունը չի կարող այս փաստաթղթերը փոխանցել վարույթ իրականացնելու մասին խնդրանքի հետ միասին, ապա փաստաթղթերը կարող են ուղարկվել նաև հետագայում:

2. Հայցող Պետությունը պետք է նաև հայցվող Պետությանը գրավոր հաղորդի խնդրանքը ներկայացնելուց հետո հայցող Պետության տարածքում իրականացված դատավարական գործողությունների կամ ձեռնարկված միջոցների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ վարույթի վրա: Այս հաղորդմանը կից ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր:

Հոդված 16

1. Հայցվող Պետությունն անհապաղ հաղորդում է հայցող Պետությանը վարույթ իրականացնելու մասին խնդրանքի վերաբերյալ իր կայացրած որոշման մասին:

2. Հայցվող Պետությունը հայցող Պետությանը պետք է տեղեկացնի նաև նաև վարույթից հրաժարվելու կամ վարույթի արդյունքում իր կողմից կայացված որոշման մասին: Գրավոր որոշման հաստատված պատճենը պետք է փոխանցվի հայցող Պետությանը:

Հոդված 17

Եթե հայցվող Պետության իրավասությունը հիմնված է բացառապես 2-րդ հոդվածի վրա, ապա այդ Պետությունը պարտավոր է կասկածվող անձին տեղեկացնել վարույթ իրականացնելու խնդրանքի մասին՝ վերջինիս թույլ տալով, որպեսզի նա հայցվող Պետությանը ներկայացնի իր տեսակետները նախքան այդ պետության կողմից խնդրանքի առթիվ որոշում կայացվելը:

Հոդված 18

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների՝ Կոնվենցիայի կիրառմանն առնչվող փաստաթղթերի թարգմանություն չի պահանջվում:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է ստորագրելու պահին կամ վավերացման, միանալու կամ ընդունելու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ իրեն իրավունք վերապահելով պահանջելու ներկայացնել վերը նշված փաստաթղթերի զուգահեռ թարգմանությունը՝ բացառությամբ 16-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված գրավոր որոշման: Մյուս Պայմանավորվող պետությունները պարտավոր են ուղարկել թարգմանությունները կամ ստացող Պետության ազգային լեզվով, կամ Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից որևէ մեկով՝ ըստ ստացող Պետության նշման: Այնուամենայնիվ, նման նշումը պարտադիր չէ: Մյուս Պայմանավորվող պետությունները կարող են պահանջել փոխադարձություն:

3. Սույն հոդվածի դրույթները չեն ազդում երկու կամ ավելի Պայմանավորվող պետությունների միջև գործող կամ ապագայում կնքվելիք պայմանագրերով կամ համաձայնագրերով՝ դիմումների և կից փաստաթղթերի թարգմանությանը վերաբերող դրույթներին:

Հոդված 19

Սույն Կոնվենցիայի կիրառման համար փոխանցված փաստաթղթերի նույնականացում չի պահանջվում:

Հոդված 20

Պայմանավորվող պետությունները միմյանցից պետք է պահանջեն սույն Կոնվենցիայի կիրառմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

Գլուխ 3. Վարույթ իրականացնելու մասին խնդրանքի հետևանքները հայցող Պետության համար

Հոդված 21

1. Վարույթ իրականացնելու մասին խնդրանք ներկայացնելու պահից հայցող Պետությունն այլևս չի կարող կասկածվող անձի նկատմամբ հետապնդում իրականացնել խնդրանքի առարկա հանցագործության առնչությամբ, ինչպես նաև ի կատար ածել տվյալ Պետության տարածքում տվյալ անձի նկատմամբ տվյալ հանցագործության համար նախկինում կայացված դատավճիռը: Մինչև հայցվող Պետության կողմից վարույթ իրականացնելու մասին խնդրանքի առնչությամբ կայացված որոշումն ստանալը հայցող Պետությունը, այդուհանդերձ, պահպանում է քրեական հետապնդման հետ կապված բոլոր քայլերը միջոցները ձեռնարկելու իրավունքը՝ բացառությամբ՝ բացառությամբ գործը դատարան ուղարկելու կամ, եթե դա նախատեսված է, թույլատրելու, որպեսզի իրավասու վարչական մարմինը գործը լուծող որոշում կայացնի:

2. Քրեական հետապնդում իրականացնելու և ի կատար ածելու իրավունքը կրկին փոխանցվում է հայցող Պետությանը, եթե.

ա. հայցվող Պետությունը, 10-րդ հոդվածին համապատասխան, տեղեկացնում է նրան խնդրանքին ընթացք չտալու իր որոշման մասին,

բ. հայցվող Պետությունը, 11-րդ հոդվածին համապատասխան, տեղեկացնում է նրան խնդրանքի ընդունումը մերժելու որոշման մասին,

գ. հայցվող Պետությունը, 12-րդ հոդվածին համապատասխան, տեղեկացնում է նրան խնդրանքն ընդունելու մասին իր որոշումը չեղյալ հայտարարելու մասին,

դ. հայցվող Պետությունը տեղեկացնում է նրան հետապնդում չիրականացնելու կամ վարույթը դադարեցնելու իր որոշման մասին,

ե. Հայցող Պետությունը հետ է վերցնում խնդրանքը նախքան հայցվող Պետության՝ խնդրանքին ընթացք տալու վերաբերյալ որոշման մասին տեղեկանալը:

Հոդված 22

Սույն բաժնի դրույթներին համապատասխան ներկայացված վարույթ իրականացնելու մասին խնդրանքի հետևանքով հայցող Պետությունում քրեական վարույթի առավելագույն ժամկետը երկարաձգվում է վեց ամսով:

Գլուխ 4. Վարույթ իրականացնելու մասին խնդրանքի հետևանքները հայցվող Պետության համար

Հոդված 23

Եթե հայցվող Պետության իրավասությունը հիմնված է բացառապես 2-րդ հոդվածի վրա, ապա տվյալ Պետությունում քրեական վարույթի առավելագույն ժամկետը երկարաձգվում է վեց ամսով:

Հոդված 24

1. Եթե վարույթի իրականացումը երկու Պետություններում էլ հիմնված է հանցագործության մասին ներկայացված բողոքի վրա, ապա հայցող Պետությունում ներկայացված բողոքը ունի նույն իրավական ուժը, ինչ հայցվող Պետությունում ներկայացված բողոքը:

2. Եթե բողոքն անհրաժեշտ է միայն հայցվող Պետությունում, ապա այդ Պետությունը կարող է սկսել վարույթը նույնիսկ բողոքի բացակայության դեպքում, եթե բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձը առարկություն չի ներկայացրել այդ անելու իր իրավունքի մասին իրավասու մարմնի կողմից ծանուցվելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 25

Հանցագործության համար կիրառելի է հանդիսանում հայցվող Պետության օրենքով նախատեսված պատժամիջոցը՝ բացառությամբ, եթե այդ օրենքով այլ բան նախատեսված չէ: Եթե հայցվող Պետության իրավասությունը բացառապես հիմնված է 2-րդ հոդվածի վրա, ապա տվյալ Պետությունում նշանակված պատիժը չի կարող ավելի խիստ լինել, քան հայցող Պետության օրենքով նախատեսված պատիժը:

Հոդված 26

1. Հայցող Պետությունում վերջինիս օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համաձայն, վարույթի իրականացման նպատակով կատարված ցանկացած գործողություն հայցվող Պետությունում ունի նույն իրավական ուժը, որը կունենար, եթե կատարվեր այդ Պետության իրավասու մարմինների կողմից՝ պայմանով, որ այդպիսի նույնականացումը տվյալ գործողությանն ավելի մեծ ապացուցողական ուժ չի հաղորդի, քան այն ունի հայցող Պետությունում:

2. Առավելագույն ժամկետի ընթացքը կասեցնող ցանկացած գործողություն, որն իրավաչափորեն կատարվել է հայցող Պետությունում, ունի միննույն իրավական ուժը հայցվող Պետության տարածքում և հակառակը:

Գլուխ 5. Հայցվող Պետությունում ձեռնարկվող միջանկյալ միջոցառումները

Հոդված 27

1. Եթե հայցող Պետությունը հայտարարում է վարույթ իրականացնելու մասին խնդրանք փոխանցելու իր մտադրության մասին, և եթե հայցվող Պետության իրավասությունը բացառապես հիմնված է 2-րդ հոդվածի վրա, ապա վերջինս կարող է, հայցող Պետության դիմումի և սույն Կոնվենցիայի ուժով, ժամանակավորապես կալանքի վերցնել կասկածվող անձին, եթե՝

ա. հայցվող Պետության օրենսդրությամբ թույլատրվում է նախնական կալանքի կիրառումը տվյալ հանցագործության համար, և

բ. հիմքեր կան ենթադրելու, որ կասկածվող անձը կթաքնվի կամ կնպաստի ապացույցները թաքցնելուն:

2. Ժամանակավոր կալանավորման մասին դիմումի մեջ պետք է նշվի, որ գոյություն ունի կալանավորման մասին որոշում կամ նույն ուժն ունեցող որևէ այլ որոշում, որը կայացվել է հայցող Պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև պետք է նշվի այն հանցագործությունը, որի առնչությամբ վարույթ իրականացնելու մասին խնդրանք պետք է ներկայացվի, որտեղ և երբ է կատարվել հանցագործությունը, կասկածյալի հնարավորին չափ ստույգ նկարագրությունը: Պետք է ներառվի նաև գործի հանգամանքների համառոտ նկարագրությունը:

3. Ժամանակավոր կալանավորման մասին դիմումը պետք է հայցող Պետության՝ 13-րդ հոդվածում նշված մարմինների կողմից փոստով, հեռագրով, գրավոր կամ հայցվող Պետության համար ընդունելի այլ միջոցով ուղղակիորեն ուղարկվի հայցվող Պետության համապատասխան մարմիններին: Հայցող Պետությունը անհապաղ տեղեկացվում է իր դիմումին տրված ընթացքի մասին:

Հոդված 28

15-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերի հետ միասին վարույթ իրականացնելու մասին խնդրանքը ստանալուն պես հայցվող Պետությունը իրավասություն է ստանում կիրառելու բոլոր այդպիսի միջանկյալ միջոցները, ներառյալ՝ կասկածվող անձին արգելանքի վերցնելը և գույքի առգրավումը, որոնք կարող էին կիրառվել նրա օրենսդրության համաձայն, եթե հայցվող վարույթի առարկա հանդիսացող հանցագործությունը կատարված լիներ նրա տարածքում:

Հոդված 29

1. 27-րդ և 28-րդ հոդվածներով նախատեսվող միջանկյալ միջոցների կիրառումը կարգավորվում է սույն Կոնվենցիայի և հայցվող Պետության օրենսդրության դրույթներով: Այդ Պետության օրենքներով կամ Կոնվենցիայով սահմանվում են նաև այն պայմանները, որոնց դեպքում այդ միջոցառումները հանվում են:

2. Այդ միջոցները հանվում են 21-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված դեպքերում:

3. Կալանքի տակ պահվող անձը պետք է ազատ արձակվի, եթե արգելանքի է վերցվել է 27-րդ հոդվածով նախատեսված կարգով, և եթե հայցվող Պետությունը վարույթ իրականացնելու խնդրանք չի ստանում կալանքի տակ վերցնելու օրվանից հետո 18 օրվա ընթացքում:

4. Կալանքի տակ պահվող անձը ցանկացած դեպքում պետք է ազատ արձակվի, եթե կալանավորվել է 27-րդ հոդվածով նախատեսված կարգով, և եթե վարույթ իրականացնելու դիմումին կից պահանջվող փաստաթղթերը հայցվող Պետությունը չի ստացել խնդրանքը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:

5. Բացառապես 27-րդ հոդվածի ուժով կիրառվող կալանավորման ժամկետը ամեն դեպքում չի կարող լինել 40 օրից ավելի:

ԲԱԺԻՆ IV - Քրեական վարույթների բազմակիությունը

Հոդված 30

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն, որը մինչև քրեական վարույթ իրականացնելը կամ դրա ընթացքում մի այնպիսի հանցագործության առնչությամբ, որը նա համարում է ոչ քաղաքական և ոչ էլ զուտ զինվորական բնույթի, տեղեկանում է մեկ այլ Պետությունում նույն անձի նկատմամբ նույն հանցագործության առնչությամբ ընթացող վարույթի մասին, պարտավոր է

պարզել, թե կարող է արդյոք կարող է կամ հրաժարվել սեփական վարույթի իրականացումից կամ կասեցնել վարույթը կամ փոխանցել այն մյուս Պետությանը:

2. Եթե նա տվյալ հանգամանքներում նպատակահարմար է համարում չհրաժարվել իր վարույթից կամ չկասեցնել վարույթը, ապա պետք է այդ մասին բավարար ժամկետում տեղեկացնի մյուս Պետությանը, ամեն դեպքում՝ մինչև ըստ էության դատավճիռ կայացնելը:

Հոդված 31

1. 30-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավիճակներում շահագրգիռ Պետությունները պետք է 8-րդ հոդվածում նշված դեպքերից յուրաքանչյուրը գնահատելուց հետո հնարավորության սահմաններում փորձեն պարզել, թե իրենցից որ մեկն է միայնակ շարունակելու վարույթի իրականացումը: Այս խորհրդակցական գործընթացի ժամանակ շահագրգիռ Պետությունները հետաձգում են ըստ էության դատավճռի կայացումը, պարտավորված չլինելով, սակայն, երկարացնելու այդպիսի հետաձգումը 30-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվող ծանուցումը ուղարկելուց հետո 30 օրից ավելի ժամանակով:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները պարտադիր չեն՝

ա. 30-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ծանուցումը ուղարկող Պետության համար, եթե նախքան ծանուցումն ուղարկելը այնտեղ մեղադրյալի ներկայությամբ հայտարարվել է քրեական գործով հիմնական դատաքննությունն սկսելու մասին,

բ. ծանուցման հասցեատեր հանդիսացող Պետության համար, եթե նախքան ծանուցումն ստանալը այնտեղ մեղադրյալի ներկայությամբ հայտարարվել է քրեական գործով հիմնական դատաքննությունն սկսելու մասին:

Հոդված 32

Ճշմարտությունը բացահայտելու անհրաժեշտությունից ելնելով և համարժեք պատիժ կիրառելու նպատակով՝ շահագրգիռ Պետությունները պետք է պարզեն, թե արդյոք նպատակահարմար է, որ իրենցից մեկը միայնակ իրականացնի վարույթը, և, եթե՝ այո, ապա փորձեն պարզել, թե իրենցից որ մեկը, եթե.

ա. էականորեն միմյանցից տարբերվող մի քանի հանցագործություններ, որոնք նախատեսված են Պետություններից յուրաքանչյուրի քրեական օրենսդրությամբ, վերագրվում են կամ մեկ անձի կամ ներքին համաձայնությամբ գործած մի քանի անձանց,

բ. մեկ հանցագործությունը, որը նախատեսված է Պետություններից

յուրաքանչյուրի քրեական օրենսդրությամբ, վերագրվում է ներքին համաձայնությամբ գործած մի քանի անձանց:

Հոդված 33

31-րդ հոդվածի 1-ին կետի և 32-րդ հոդվածի համաձայն կայացված բոլոր որոշումների դեպքում Պետությունների միջև առաջանում են բոլոր այն հետևանքները, որոնք առաջանում են սույն Կոնվենցիայի համաձայն վարույթը փոխանցելու դեպքում: Եթե Պետությունը հրաժարվում է իր սեփական վարույթի իրականացումից, ապա համարվում է, որ նա այն փոխանցել է այլ Պետության:

Հոդված 34

III-րդ Բաժնի 2-րդ գլխով նախատեսված փոխանցման ընթացակարգը կիրառվում է այնքանով, որքանով դրա դրույթները համատեղելի են սույն Բաժնի դրույթներին:

ԲԱԺԻՆ V - *Ne bis in idem* Կրկնակի հետապնդման և դատապարտման անթույլատրելիությունը

Հոդված 35

1. Անձը, որի նկատմամբ կայացվել է վերջնական և ի կատար ածման ենթակա դատավճիռ, չի կարող նույն արարքի համար հետապնդվել, դատապարտվել կամ ենթարկվել պատժի մեկ այլ Պայմանավորվող պետությունում, եթե.

ա. նա արդարացվել է,

բ. նշանակված պատիժը`

i. ամբողջությամբ ի կատար է ածվել կամ ի կատար է ածվում, կամ

ii. մասամբ կամ ամբողջությամբ ի կատար չի ածվել համաներման կամ ներման պատճառով, կամ

iii. այլևս չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետը լրանալու պատճառով,

գ. դատարանը հանցագործություն կատարած անձին մեղավոր է ճանաչել` առանց պատիժ նշանակելու:

2. Այնուհանդերձ, Պայմանավորվող պետությունը, բացառությամբ այն դեպքերի, եթե ինքն է դիմել վարույթ իրականացնելու համար, չպետք է պարտավորված լինի ճանաչելու «ne bis in idem»-ի սկզբունքը, եթե դատավճռի կայացման հիմքում ընկած արարքը ուղղված է եղել տվյալ Պետություն պետական կարգավիճակ ունեցող անձի, հաստատության կամ այլ սուբյեկտի դեմ, կամ եթե դատապարտված անձը տվյալ Պետությունում պետական կարգավիճակ ունեցող անձ է:

3. Բացի այդ՝ Պայմանավորվող պետությունը, որտեղ կատարվել է արարքը կամ որի օրենսդրության համաձայն այն համարվում է այդպիսին, պարտավոր չէ ճանաչելու «ne bis in idem»-ի սկզբունքը, եթե այդ Պետությունն ինքը չի դիմել վարույթ իրականացնելու համար:

Հոդված 36

Եթե նոր վարույթ է իրականացվում մի անձի նկատմամբ, որը մեկ այլ Պայմանավորվող պետության տարածքում արդեն դատապարտվել է միևնույն հանցագործության համար, ապա նշանակվելիք պատիժը կրճատվում է ի կատար անվող դատավճռով նախատեսված ազատագրկման ձևով արդեն իսկ կրված պատժի չափով:

Հոդված 37

Սույն Բաժնի դրույթները չեն խոչընդոտում «ne bis in idem» սկզբունքի ավելի ներպետական օրենսդրության ավելի տարածական դրույթների կիրառմանը՝ կապված օտարերկրյա դատավճիռների հետ:

ԲԱԺԻՆ VI - Եզրափակիչ դրույթներ

Հոդված 38

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման կամ ընդունման: Վավերացման կամ ընդունման մասին վավերագրերը ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:
2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման կամ ընդունման մասին երրորդ վավերագիրն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:
3. Կոնվենցիան հետագայում վավերացնող կամ ընդունող Ստորագրող պետության

համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման կամ ընդունման մասին վավերագիրն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

Հոդված 39

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի Խորհրդի ցանկացած անդամ չհանդիսացող պետությանը միանալու սույն Կոնվենցիային՝ պայմանով, որ այդպիսի հրավեր պարունակող բանաձևը պետք է ստանա սույն Կոնվենցիան վավերացրած՝ Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների միաձայն համաձայնությունը:

2. Նման միացումը ուժի մեջ է մտնում միանալու մասին վավերագիրը Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

Հոդված 40

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է ստորագրելու պահին կամ վավերացման, միանալու կամ ընդունելու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Կոնվենցիան:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է վավերացման, միանալու կամ ընդունելու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս կամ հետագայում՝ ցանկացած պահի, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ տարածել սույն Կոնվենցիայի կիրառումը հայտարարության մեջ նշված յուրաքանչյուր այլ տարածքի կամ տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է, կամ որոնց անունից ինքը լիազորված է պարտավորություններ ստանձնելու:

3. Նախորդ կետի համաձայն արված յուրաքանչյուր հայտարարություն կարող է հետ վերցվել այդ հայտարարության մեջ նշված որևէ տարածքի առնչությամբ՝ սույն Կոնվենցիայի 45-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով:

Հոդված 41

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է, սույն Կոնվենցիան ստորագրելու պահին կամ վավերացման, միանալու կամ ընդունելու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս, հայտարարել, որ կատարում է սույն Կոնվենցիայի I-ին Հավելվածով նախատեսված վերապահումներից մեկը կամ մի քանիսը, կամ կատարել սույն Կոնվենցիայի II-րդ Հավելվածով նախատեսված որևէ

հայտարարություն:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով հրաժարվել նախորդ կետի համաձայն կատարած վերապահումից կամ հայտարարությունից մասնակիորեն կամ ամբողջությամբ, որը ուժի մեջ է մտնում հայտարարությունը ստանալու օրվանից:

3. Պայմանավորվող պետությունը, որը վերապահում է արել Կոնվենցիայի որևէ դրույթի վերաբերյալ, չի կարող պահանջել այդ դրույթի կիրառումը որևէ այլ Պայմանավորվող պետություն կողմից; այնուամենայնիվ, նա կարող է պայմանական կամ մասնակի վերապահման դեպքում պահանջել այդ դրույթի կիրառումը այն չափով, որ չափով ինքն ընդունել է այն:

Հոդված 42

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված գրավոր հայտարարությամբ, ցանկացած պահի ամրագրել սույն Կոնվենցիայի III Հավելվածում ընդգրկվելիք իրավական դրույթները:

2. III-րդ Հավելվածում թվարկված ներպետական դրույթների ցանկացած փոփոխության մասին պետք է ծանուցվի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին, եթե այդպիսի փոփոխության արդյունքում նշված Հավելվածի տեղեկությունները դադարում են ճշգրիտ լինելուց:

3. Նախորդ երկու կետերի կիրառմամբ III-րդ Հավելվածում կատարված ցանկացած փոփոխություն յուրաքանչյուր Պայմանավորվող պետության նկատմամբ ուժի մեջ է մտնում դրա մասին Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու օրվանից մեկ ամիս հետո:

Հոդված 43

1. Սույն Կոնվենցիան չի ազդում ոչ այն իրավունքների ու պարտավորությունների վրա, որոնք բխում են հանձնման մասին պայմանագրերից կամ առանձին հարցերով միջազգային բազմակողմ համաձայնագրերից, ոչ էլ սույն Կոնվենցիայում շոշափվող հարցերին վերաբերող այն դրույթների վրա, որոնք պարունակվում են Պայմանավորվող պետությունների միջև գործող այլ համաձայնագրերով:

2. Պայմանավորվող պետությունները չեն կարող սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ միմյանց հետ կնքել երկկողմ կամ

բազմակողմ համաձայնագրեր՝ բացառությամբ, երբ դա կատարվում է սույն Կոնվենցիայի դրույթները լրացնելու կամ սույն Կոնվենցիայով սահմանված սկզբունքների կիրառումը հեշտացնելու նպատակով:

3. Այնուամենայնիվ, եթե երկու կամ ավելի Պայմանավորվող պետություններ որևէ հարցով իրենց հարաբերություններն արդեն իսկ ամրագրել են կամ ապագայում կամրագրեն միասնական օրենսդրության հիման վրա կամ ստեղծել են կամ ապագայում կստեղծեն իրենց առանձին համակարգը, ապա նրանք իրավասու են համապատասխան կերպով կարգավորել իրենց այդ հարաբերությունները՝ անկախ սույն Կոնվենցիայի դրույթներից:

4. Նախորդ կետի համաձայն՝ այս ոլորտում իրենց փոխադարձ հարաբերությունների նկատմամբ Կոնվենցիայի դրույթների կիրառումը դադարեցնող Պայմանավորվող պետությունները պետք է այդ մասին ծանուցել Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 44

Եվրոպայի Խորհրդի Հանցագործությունների հիմնախնդիրների հարցերով Եվրոպական հանձնաժողովը պետք է տեղյակ պահվի սույն Կոնվենցիայի կիրառման հետ կապված և անի այն ամենը, ինչն անհրաժեշտ է Կոնվենցիայի կատարումից ծագող դժվարությունների խաղաղ լուծման համար:

Հոդված 45

1. Սույն Կոնվենցիան ուժի է մտնում անորոշ ժամկետով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով կարող է չեղյալ հայտարարել իր անդամությունը սույն Կոնվենցիային:

3. Այդպիսի հայտարարությունն ուժի մեջ է մտնում այդ մասին ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից վեց ամիս հետո:

Հոդված 46

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի Խորհրդի անդամ Պետություններին և Կոնվենցիային միացած բոլոր Պետություններին ծանուցում է.

ա. յուրաքանչյուր ստորագրման մասին,

բ. վավերացման, ընդունման կամ միանալու մասին վավերագիր ի պահ հանձնելու յուրաքանչյուր դեպքի մասին,

գ. Կոնվենցիան՝ սույն Կոնվենցիայի 38-րդ հոդվածի համաձայն, ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին,

դ. 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ստացված յուրաքանչյուր հայտարարության մասին,

ե. 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ստացված յուրաքանչյուր հայտարարության մասին,

զ. 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ստացված յուրաքանչյուր հայտարարության մասին,

է. 40-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն ստացված յուրաքանչյուր հայտարարության մասին,

ը. 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն արված յուրաքանչյուր վերապահման կամ հայտարարության մասին,

թ. 41-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ցանկացած վերապահումից կամ հայտարարությունից հրաժարվելու մասին,

ժ. 42-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ստացված յուրաքանչյուր հայտարարության և նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն հետագայում ստացված յուրաքանչյուր ծանուցման մասին,

ժա. 43-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ստացված յուրաքանչյուր ծանուցման մասին,

ժբ. 45-րդ հոդվածի համաձայն ստացված յուրաքանչյուր ծանուցման և անդամությունը չեղյալ հայտարարելը ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի մասին:

Հոդված 47

Սույն Կոնվենցիան և դրան համապատասխան թույլատրված ծանուցումներն ու հայտարարությունները պետք է կիրառվեն միայն այն հանցագործությունների առնչությամբ, որոնք կատարվել են շահագրգիռ Պետությունների համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո:

Ի վկայություն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում, 1972 թվականի մայիսի 15-ին, մեկ օրինակով, անգլերենով և ֆրանսերենով, երկու տեքստ էլ՝ հավասարազոր, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի արխիվին: Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Կոնվենցիան ստորագրող և դրան միացող բոլոր Պետությունների կառավարություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում.

ա. մերժել վարույթի իրականացման խնդրանքը, եթե գտնում է, որ հանցագործությունը զուտ կրոնական բնույթի է,

բ. մերժել վարույթի իրականացման խնդրանքը, եթե իր օրենսդրության համաձայն, տվյալ հանցագործության համար նախատեսվող պատիժը կարող է նշանակվել միայն վարչական մարմնի կողմից,

գ. չընդունել 22-րդ հոդվածը,

դ. չընդունել 23-րդ հոդվածը,

ե. սահմանադրական նկատառումներով չընդունել 25-րդ հոդվածի երկրորդ նախադասության դրույթները,

զ. չընդունել 26-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված դրույթները, եթե իրավասու է իր օրենսդրության համաձայն,

է. չկիրառել 30-րդ հոդվածի և 31-րդ հոդվածի դրույթները այն արարքների

նկատմամբ, որոնց համար, իր օրենսդրության կամ շահագրգիռ այլ Պետության համաձայն, պատիժ կարող է նշանակվել միայն վարչական մարմնի կողմից,

ը. չընդունել V-րդ ԲԱԺԻՆԸ:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է հայտարարել, որ իր սահմանադրական իրավունքից բխող պատճառներով կարող է վարույթի իրականացման խնդրանքներ ներկայացնել կամ ստանալ միայն իր ներպետական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է հայտարարություն ներկայացնելու միջոցով սահմանել Կոնվենցիայում օգտագործվող «քաղաքացի» հասկացության բովանդակությունը իրեն վերաբերելի մասով:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Քրեական օրենքով չնախատեսված այլ իրավախախտումների ցանկ

Հետևյալ իրավախախտումները նույնականացվում են քրեական օրենքով հանցագործություն համարվող իրավախախտումներին.

- Ֆրանսիայում`

ցանկացած ոչ իրավաչափ վարքագիծ, որի համար նախատեսված է պատիժ *contravention de grande voirie*-ի ձևով:

- Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում`

ցանկացած ոչ իրավաչափ վարքագիծ, որի նկատմամբ կիրառվում է Կանոնակարգերի խախտման մասին օրենքով («*Gesetz über Ordnungswidrigkeiten*, 1968թ., 24 մայիսի, BGB1 1968, 1, 481) նախատեսված ընթացակարգը.

- Իտալիայում`

ցանկացած ոչ իրավաչափ վարքագիծ, որի նկատմամբ կիրառելի է 1967թ. մարտի 3-ի Հ-317 օրենքը: